ԿՐԹԱԿԱՆ

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ

***Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը հատուկ ուղերձով դիմել է դիմորդներին: Ինչպես տեղեկացրել է ազգային կենտրոնը, ներկա դրությամբ, առկա տեղեկատվության համաձայն, Միասնական ազգային քննություններին մասնակցելու համար, գրանցում է անցել 36 հազար դիմորդ, ավելի քան 2500 ուսանող գրանցվել է՝ դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար, 9 հազարը գրանցվել են որպես մագիստրատուրայի թեկնածուներ եւ 17 հազար մանկավարժներ հավակնում են իրենց մասնագիտական իրավասությունների հաստատմանը:***

Ինչպես նշված է դիմումում՝ Միասնական ազգային քննություններին մասնակցության համար գրանցումը ավարտվել է մարտի 30-ին: Բոլոր նրանք, ովքեր մինչ այդ օրը չեն հասցրել գրանցվել, 2018 թվականին չեն կարողանա ներգրավվել քննական մրցույթին:

Ազգային կենտրոնը հիշեցնում է, որ դիմորդների գրանցումը սկսվել էր մարտի 5-ից: Գրանցման հիմնական փուլում՝ դիմորդները ներկայացնելու էին իրենց անձնական տվյալները՝ քննական քաղաքի եւ քննության առարկաների ընտրությունը:

Մինչեւ մայիսի 15-ի ժամը 18.00-ը դիմորդներն ունեին քննության առարկան ավելացնելու կամ փոխելու իրավունք, իսկ կրթական ծրագրի ցուցակում փոփոխությունների կատարումը հնարավոր է միայ՝ բողոքարկման արդյունքների հրապարակումից հետո:

Ազգային կենտրոնի տեղեկատվությամբ՝ մարտի 30-ին ավարտվել է նաեւ ուսանողների դրամաշնորհային մրցույթի, ընդհանուր մագիստրոսի քննությունների եւ մանկավարժների մասնագիտական իրավասության հաստատման քննությունների համար գրանցումը:

## ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՌԱՄՅԱ ՆՈՐ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԱՅԱՆԱ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

***Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին, ընթացիկ տարվա ամառվա ընթացքում, համալսարանի հետ միասին, կմշակվի սխեմա, ըստ որի՝ բակալավրիատի առանձին ծրագրերում կրեդիտները կկրճատվեն: Չորսից մինչեւ երեք տարի նվազեցված բակալավրիատի ծրագրերում առաջին ընդունելությունը կանցկացվի 2018 թվականի սեպտեմբերին:***



«Մեր գլխավոր նպատակն է՝ մինչեւ երեք տարի նվազեցնել բակալավրիատի առանձին ծրագրերը, քանի որ Եվրոպայում մի շարք մասնագիտությունների ծրագրերի կրեդիտները նվազեցվել են: Որպեսզի նրանց հետ միասին կարողանանք իրացնել համատեղ ծրագրերը, այդ բարեփոխման իրականացումը պարտադիր էր: Ինչ վերաբերում է նրան, թե որ մասնագիտություններին կառնչվի այդ փոփոխությունը, մենք ամառվա ընթացքում համալսարանների հետ կմշակենք սխեմա՝ ըստ որի էլ կիրականացվի կրեդիտների կրճատումը»,- հայտարարեց Միխեիլ Չխենկելին:

Հիշեցնենք, որ, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության նախաձեռնությամբ՝ բարձրագույն կրթության մասին օրենքում իրականացվում են փոփոխություններ՝ ըստ որի՝ բակալավրիատի առանձին ուղղությունների ծրագրերում ուսուցումը չորսից նվազեցվում է մինչեւ երեք տարի:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԽԵՄԱՅՈՒՄ

***Ուսուցիչների գնահատման եւ նրանց զարգացման սխեմայում իրականացվում են փոփոխություններ:***

Ինչպես հայտարարեցին Ուսուցչի տանը, սխեման, որը բազմիցս ենթարկվել է քննադատության, կատարելագործման կարիք ունի, այն պետք է հնարավորինս պատասխանի օրվա պահանջին, ընդգրկի նվազ բյուրոկրատություն եւ ավելի շատ պրակտիկ գործունեություն: Մենք առավելագույնս պետք է նվազեցնենք բյուրոկրատական մեխանիզմները եւ արգելքները, որոնք ընդգրկված են այդ սխեմայում եւ օգնենք ուսուցիչներին առավելագույնս կենտրոնանալ մասնագիտական զարգացման վրա եւ նվազ զբաղվել գրավոր բաղադրիչներով»,- հայտարարեց Ուսուցչի տան տնօրեն Գիա Մաչաբելին:

Մոտ ժամանակներում, Վրաստանի կրրթության նախարարությունը ուսուցիչների աշխատանքի գնահատման սխեմայի փոփոխությունները կներկայացնի կառավարությանը:

ՊՐԵՄԻԵՐԱ

## ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ ԴԱՐՁԱՆ «ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՎԱ» ԷՊԻԿԵՆՏՐՈՆԸ

***Մարտի 27-ին Վրաստանի թատերական միության՝ Ակ.Խորավայի անվան «Դերասանի տանը» հանդիսավորապես նշվեց «Թատրոնի համաշխարհային օրը»: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի տարբեր թատրոնների դերասաններ, ռեժիսորներ, դրամատուրգներ: Այստեղ էր նաեւ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի թատերական դասը:***

Վրաստանի մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Գիորգաձեն, ողջունելով ներկաներին, մի շարք դերասանների պարգեւատրեց «Վերիկո Անջափարիձե» եւ «Կոտե Մախարաձե» մեդալներով:

Տոնի էպիկենտրոնն ասես դարձավ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը: Ադամյանցիները ներկաներին վրացերեն ներկայացրեցին Ն.Դումբաձեի «Սպիտակ դրոշներ» վեպի հենքով ստեղծված «Մեղադրական եզրակացություն» պիեսը:

Իսկ մարտի 28-ին, Թբիլիսիի Նոդար Դումբաձեի անվան Պատանի հանդիսատեսի թատրոնում ադամյանցիները ներկայացրին «Օրը՝ անձրեւոտ» պիեսի պրեմիերան: Հիշեցնենք, որ Պ.Ադամյանի անվան պետհայդրամ թատրոնը՝ Հայաստանի ամենամյա թատերական «Արտավազդ» փառատոնին, որ տեղի ունեցավ Երեւանում՝ մարտի 1-27-ը, ներկայացել էր հենց այս բեմադրությամբ:

Պիեսի հեղինակ եւ բեմադրիչ-ռեժիսոր՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն ու ներկայացմանն ընդգրկված դերակատարները, նրանում բարձրացրել են՝ բոլոր ժամանակների համար արդիական՝ մարդկային առողջ նկարագրի ու նրա բարոյական կերպարի վրա մարդկային մոլուցքների կործանարար ազդեցության գերխնդիրը, եւ դրա արդյունքում՝ մարդ-հասարակություն ներդաշնակ կապի խորտակման հարցը:

«Մի կում օդի» ճաշակելու ձգտումը դարձնելով գոյության միակ նպատակ՝ պիեսի հերոսները՝ այդ անդիմադրելի բաղձանքին հասնելու համար, պատրաստ են ոտնատակ տալ մարդկային եւ ընտանեկան պարտականությունները, կորցնել սեփական «ես»-ի գիտակցման կարողությունն՝ ընդհանրապես: Այդ կորուստների շարքում է նույնի'սկ սեփական անվան անհրաժեշտության գիտակցումը. այստեղ հերոսներն իրենց, պարզապես, անվանում են շաբաթվա օրերով…

Ներգրավված դերակատարների՝ Դավիթ Բարսեղյանի (Երկուշաբթի), Արթուր Գասպարյանի (Երեքշաբթի), Էդուարդ Մուրադյանի (Չորեքշաբթի), Գագիկ Մելքումյանի (Հինգշաբթի), Նարեկ Բայանդուրյանի (Ուրբաթ), Ֆելիքս Խաչատրյանի (Շաբաթ), Աշոտ Սիմոնյանի (Կիրակի), անելիքը բարդ էր: Մեկ ժամ տեւող բեմադրության ընթացքում, սահմանափակ տարածքի ու սահմանափակ գործողությունների արդյունքում, նրանք պետք է ներկայացնեին համոզիչ հոգեբանություն ու կերպար: Դատելով դահլիճի արձագանքներից՝ դա նրանց հաջողվեց: Հանդիսատեսի առանձնակի ուշադրությանն արժանացան Նարեկ Բայանդուրյանի Ուրբաթը, Էդուարդ Մուրադյանի Չորեքշաբթին, Աշոտ Սիմոնյանի Կիրակին:

Ներկայացման նկարչական եւ երաժշտական մեկնաբանությունները իրագործվել են Մալխազ Իոբաշվիլու եւ Վալերի Ամիրագյանի ձեւավորումների շնորհիվ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

## ԿԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ «ԹԱՆԴՈՅԱՆՑ» ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ

***Թբիլիսիի «Թանդոյանց» Սուրբ Աստվածածին եկեղեցին գործում էր մինչեւ 20-րդ դարի 30-ական թվականները, երբ խորհրդային իշխանությունը, իր հակակրոնական քարոզարշավի շրջանակներում, փակեց բազում եկեղեցիներ, որոնց շինությունները սկսեցին օգտագործել տնտեսական տարբեր նպատակներով: Փակված եկեղեցիների թվում էր նաեւ «Թանդոյանց» Սուրբ Աստվածածին եկեղեցին: Սկզբում եկեղեցու շենքը վերածվեց պահեստի, իսկ հետո, մինչեւ 1993 թվականը, այդտեղ գործում էր կինոթատրոն, որը թբիլիսցիներին հայտնի էր «Կոլխիդա» անվամբ:***



Մարտի 27-ին, Թբիլիսիի «Betsys» հյուրանոցի կոնֆերանսների դահլիճում տեղի ունեցավ Կլոր սեղան՝ նվիրված «Թանդոյանց» եկեղեցու հարցին եւ կրոնական միավորումների պաշտամունքային շինությունների ռեստիտուցիայի հիմնախնդրին:

Միջոցառումը կազմակերպել էին մայրաքաղաքում գործող TDI (Հանդուրժողականության եւ բազմազանության ինստիտուտը) եւ EMC (Մարդու իրավունքների հետազոտության եւ մոնիտորինգի կենտրոնը):

Հանդիպմանը հրավիրված էին Վրաստանում կրոնական միավորումների առաջնորդներ, մարդու իրավունքների հարցերով հասարակական կազմակերպություններ, քաղաքաշինության ոլորտին առնչվող մասնագետներ, դիվանագիտական կորպուսի, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մասնակիցների թվում էին նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետները:

Կլոր սեղանի նպատակն էր՝ հավաքվածներին ծանոթացնել «Թանդոյանց» հայոց եկեղեցու հարցով իրավական գործընթացին, պատմական ու ճարտարապետական հետազոտության արդյունքներին, ինչպես նաեւ՝ քննարկել խորհրդային ժամանակաշրջանում քանդված, փակված եւ այլ նպատակներով օգտագործվող պաշտամունքային շինությունների հիմնախնդիրը:

Կլոր սեղանին ելույթ ունեցան TDI եւ EMC-ի իրավաբաններ՝ Թամթա Միքելաձեն, Գվանցա Լոմաիան եւ Էթո Գվրիտիշվիլին, որոնք «Թանդոյանց» եկեղեցու հարցով դատական գործի փաստաբաններ են:

Կլոր սեղանին ելույթ ունեցավ նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, որը կարեւորեց եկեղեցիները եւ պաշտամունքային շինությունները իրենց իրավական եւ պատմական սեփականատերերին վերադարձնելու կրոնական միավորումների պահանջը:

Իրենց դիրքորոշումը քննարկման հիմնախնդրին ներկայացրեցին նաեւ Հարավային Կովկասի լատինական կաթոլիկների առաքելական վարչության առաջնորդ Ջուզեպպե եպիսկոպոս Պազոտոն, Վրաստանում Ավետարանական-լութերական եկեղեցու առաջնորդ Մարկուս եպիսկոպոս Շոխը, Վրաստանում Ավետարանական-մկրտական եկեղեցու առաջնորդ Մերաբ եպիսկոպոս Գափրինդաշվիլին, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին կից գործող Կրոնական կազմակերպությունների խորհրդի ղեկավար Բեքա Մինդիաշվիլին:

Միջոցառումն իրականացվեց ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Վրաստանում Օրենքի գերակայության աջակցություն» (PROLoG) նախագծի աջակցությամբ, որն իրականացվում է Արեւելք-Արեւմուտք կառավարման ինստիտուտի (EWMI) կողմից:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ



***Գրեթե երկու տասնյակ տարիներ միասին ենք, կարծես թե իրար լավ ենք ճանաչում, սակայն, վերջին ժամանակներում, ինչ-որ խորթություն, օտարայում է զգայվում: Որոշակի սառնություն է թափանցել՝ ամուսնուս հետ հարաբերություններում, չգիտեմ՝ ինչպե՞ս վարվել:***

***Ա.Տ.***

***Թբիլիսի***

Եթե դուք օրինավոր ընտանիք ունեք, պարզապես աշխատանքից տուն վերադարձող ձեր ամուսնուն ավելի շատ վերջին լուրերն են հետաքրքրում, քան անձնական հարաբերությունները, հնարավոր է, որ պատճառը տարիքային ճգնաժամն է: Հարաբերությունների ամենածանր ճգնաժամը վրա է հասնում այն ժամանակ, երբ զգացմունքները թուլանում են: Խոսեք եւ փորձեք սերը պահպանել: Խուսափե'ք բացասական նախազգացումներից եւ մտքերից: Հաճախ է պատահում, որ աշխատանքի մեջ հաջողակ, հրաշալի կին ու երեխաներ ունեցող տղամարդը, պարզապես, դժգոհ է լինում ինքն իրենից: Դա անհատական ճգնաժամ է, երբ մարդ չի կարողանում հասկանալ իր դժգոհության պատճառները եւ, ինքնաբերաբար, իր անբավարարվածությունը զուգընկերոջ գլխին է թափում: Այդ վիճակից հնարավոր է դուրս գալ, եթե մարդը պատրաստ է երկխոսության եւ լիովին վստահում է ձեզ: Փորձեք նրան հասկացնել, որ դուք ցանկացած պահի պատրաստ եք լսել եւ օգնել նրան: Ձեր օգնությունն ու մասնակցությունը այս դեպքում, պարզապես, անհրաժեշտություն է:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՏՈՄԱՐ



***Այս կամ այն իրադարձության կապակցությամբ, հաճախ կարելի է լսել՝ «հին տոմարով», «նոր տոմարով» արտահայտությունները: Փորձեցի պարզել, թե որտեղի՞ց են ծագել դրանք, եւ ինչո՞վ է պայմանավորված այդ տոմարների տարբերությունը: Գուցե դուք օգնեք:***

***Ս.Մուրադյան***

***Նինոծմինդա***

1582 թվականի հոկտեմբերին, Հռոմի Գրիգոր XIII պապը նկատել է, որ Հուլյան, այսինքն՝ հին տոմարը, մինչեւ 16-րդ դարը, տվել է 10 օրվա տարբերություն: Այդ տարբերությունը հայտնի է դարձել գարնանային գիշերահավասարին՝ մարտի 21-ին: Գրիգոր XIII կարգադրել է 1582 թվականի հոկտեմբերի 4-ի՝ հինգշաբթի օրվան հաջորդող համարել ուրբաթ՝ հոկտեմբերի 15-ը, բաց թողնելով կուտակված 10 օրերը, որոնց սխալն առաջացել էր 325-1582 թվականների ընթացքում: Այդպիսով, հաստատվել է նոր՝ Գրիգորյան տոմարը: Իսկ 16-20-րդ դարերի ընթացքում Հուլյան եւ Գրիգորյան տոմարների միջեւ տարբերությունն արդեն կազմել է 13 օր:

Ռուսաստանում հին Նոր տարին տոնելու ավանդույթը սկսվել է 1918 թվականին՝ նոր ժամանակագրություն մտցնելուց հետո: Դրան նպաստել է նաեւ այն հանգամանքը, որ Ռուս Ուղղափառ եկեղեցին, մինչեւ այժմ, շարունակում է եկեղեցական տոները նշել՝ ըստ Հուլյան տոմարի: Հին Նոր տարին ոչ պաշտոնապես նշվում է մի շարք հետխորհրդային երկրներում՝ Հայաստանում, Մոլդովայում, Բելառուսում, Լատվիայում, Ուկրաինայում, Ղազախստանում, Ուզբեկստանում եւ Վրաստանում, նախկին Հարավսլավիայի տարածքում՝ Սերբիայում, Չեռնոգորիայում եւ Մակեդոնիայում, Շվեյցարիայի մի շարք գերմանախոս կենտրոններում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ՄԱՐԴՈՒ Ո՞Ր ՕՐԳԱՆՆԵՐԻՆ ՎՆԱՍ ԿՀԱՍՑՆԻ ԱԼԿՈՀՈԼԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ

*Այն, որ ալկոհոլը վնաս է հասցնում մարդու օրգանիզմին, հանրահայտ փաստ է, թեպետ շատ հազվադեպ են խորանում մանրամասնություններում, թե կոնկրետ օրգանիզմի ո՞ր օրգաններն են գլխավորապես տուժում: Մենք փորձեցինք որոշակիորեն դա պարզել:*

**1.Սիրտ**



Վերջերս իրականացված մի շարք հետազոտություններ այն եզրահանգմանն են բերել, որ մի բաժակ կարմիր գինին, իր բաղադրության մեջ մտնող հակաօքսիդանտների հաշվին, կարող է սիրտանոթային հիվանդությունների առաջացման ռիսկի նվազեցման բերել: Սակայն, ի՞նչ կպատահի, եթե մեկ բաժակը մեկ շիշ դառնա: Ժամանակի ընթացքում այն կթուլացնի սրտի մկանները եւ արյան շրջանառության խանգարումներ կպատճառի: Ալկոհոլը չարաշահողներից եւ ալկոհոլային կախվածություն ունեցողներից շատերը ծանոթ են կարդիոմիոպաթիա կոչվող վիճակին, երբ սիրտը սկսում է ընդլայնվել ու սեղմվել: Այն ընդհատվող շնչառությամբ, սրտի առիթմիայով (անկանոն աշխատանք), հոգնածությամբ, լյարդի ընդլայնմամբ եւ անդադար հազով է զուգորդվում: Ալկոհոլի չարաշահումը կարող է նաեւ սրտի կաթվածի, ինսուլտի եւ հիպերտենզիայի հանգեցնել:

**2.Ուղեղ**



Էյֆորիայի զգացումից բացի, ալկոհոլային խմիչքները կարող են նաեւ խիստ բացասական ազդեցություն ունենալ ուղեղի վրա: Դրանց մեջ առկա էթանոլ սպիրտը, նյարդային հաղորդիչների միջեւ տեղեկատվական կապը դանդաղեցնելու կարողության շնորհիվ, լուրջ սպառնալիք է ներկայացնում օրգանի բազմաթիվ հատվածների համար: Նյարդային հաղորդիչներին պարբերաբար պատճառված վնասը կարող է պահվածքի եւ տրամադրության փոփոխությունների՝ դեպրեսիայի, հիշողության կորստի հանգեցնել: Իսկ, ահա, թերսնման պարագայում, Վերնիկ-Կորսակովի համախտանիշը՝ «խոնավ ուղեղ» կարող է ի հայտ գալ, որի ախտանշաններից են դեպրեսիան, զգայախաբությունը, մկանների կոորդինացիայի կորուստը եւ նոր հիշողություններ կազմավորելու անկարողությունը:

**3.Լյարդ**



Մարդիկ լյարդի կարեւորությունը թերագնահատելու հակում ունեն: Եվ այնուամենայնիվ, ալկոհոլային կախվածություն ունեցողներից շատերը կհուշեն, թե ինչ գործառույթներ է այդ օրգանը իրականացնում: Խոսքը մարսողության կարգավորման, սնուցիչների կլանման, վարակների վերահսկման եւ օրգանիզմից թունավոր նյութերի արտազատման մասին է: ԱՄՆ-ի ավելի քան 2 մլն բնակիչներ, ներկայումս, լյարդի՝ ալկոհոլի չարաշահմամբ հրահրված հիվանդություններով են տառապում: Բավական է ասել, որ, 2009թ. մահացության պատճառների վարկանիշային ցուցակում, լյարդի ցեռոզը 12-րդ հորիզոնականն է գրավել: Մեկ այլ ցուցանիշ եւս. Միացյալ Նահանգներում, օրգանի փոխպատվաստման սպասող 3 հիվանդներից մեկը, ալկոհոլի չարաշահման արդյունքում է աղետալի վիճակում հայտնվել:

**4.Ենթաստամոքսային գեղձ**

Ալկոհոլի մեծ քանակությունը ենթաստամոքսային գեղձի



աշխատանքի խախտման է հանգեցնում: Մասնավորապես, փոքր աղիների համար արտազատվող էնզիմները օրգանի ներսում են մնում եւ, կուտակվելով, բորբոքում առաջացնում: Այս՝ պանկրեատիտ կոչվող հիվանդությունը կարող է հանկարծահաս լինել (սուր պանկրեատիտ), որի դեպքում որովայնի հատվածի ցավերը եւ սրտխառնոցը՝ սրտի արագ աշխատանքով, փորլուծությամբ եւ բարձր ջերմաստիճանով են զուգորդվում: Իսկ քրոնիկ պանկրեատիտը, որի դեպքում ենթաստամոքսային գեղձն աստիճանաբար քայքայվում է, կարող է շաքարախտի հանգեցնել եւ՝ նույնիսկ մահացու ելք ունենալ:

**5.Երիկամներ**



Ալկոհոլի ազդեցությամբ օրգանիզմը մեծ քանակությամբ մեզ է արտադրում, ինչը կարող է երիկամների աշխատանքի խախտումներ սադրել: Այս զույգ օրգաններն այլեւս դժվարությամբ են օրգանիզմով հեղուկների հոսքը, հետեւաբար՝ նատրիումի, կալիումի եւ քլորիդային իոնների բաշխումը, կարգավորում, ինչի արդյունքում էլեկտրոլիտների անհավասարակշռություն կարող է առաջանալ: Բացի այդ, ալկոհոլի չարաշահումը արյան բարձր ճնշում է խթանում, ինչը երիկամների աշխատանքի խախտման գլխավոր պատճառներից մեկն է համարվում:

## ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

❐ Մարդու ամենազգայուն մատը ցուցամատն է:

❐ Կապույտ աչքերով սպիտակ կատուները հիմնականում խուլ են լինում:

❐ Ընձուղտները եւ առնետները կարող են ավելի երկար դիմանալ առանց ջրի, քան ուղտերը:

❐ Էլեկտրական աթոռը հայտնագործվել է ատամնաբույժի կողմից:

❐ Կանայք թարթում են կոպերը երկու անգամ շատ, քան տղամարդիկ:

❐ Գորտերը չեն կարողանում բաց աչքերով կուլ տալ ինչ-որ բան:

❐ Գորտերը բերանով ջուր չեն խմում, նրանք խմում են մաշկի միջոցով:

❐ Փղերը միակ կաթնասուններն են, որոնք չեն կարողանում ցատկել:

❐ Փղերը քնում են 4-5 ժամ՝ 24 ժամվա ընթացքում:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *Տղամարդը գնում է հեռավոր բարեկամին հյուր: Սա տանում է այգին ցույց տալու: Շրջում են այգով, տեսնում է մի ծառի ճյուղերին բազմագույն ժապավեններ են կապած, ծառի բնին՝ ոսկետառ ցուցանակ: Հարցնում է.*

*- Սա ի՞նչ է:*

*- Բա չիմացա՞ր: Զոքանչս էս ծառից էր կախվել:*

*- Ինչ կլնի', մի երկու շիվ տուր, տանեմ՝ մեր ծառերն էլ պատվաստեմ:*

☺ *- Չե՞ք ամաչում: Քառասուն տարի ապրեցիք ձեր կնոջ հետ, իսկ հիմա թողել եք նրան ու ամուսնացել երիտասարդ աղջկա հետ:*

*- Դուք ի՞նչ եք հասկանում: Նախկին կինս գիշերներն անվերջ տանջում էր. մեկ վալիդոլ տուր նրան, մեկ՝ կաթիլներ, մեկ՝ լուսամուտը բաց... Հոգնել էի: Իսկ երիտասարդի հետ շատ լավ է. երեկոյան գնում է, առավոտյան՝ վերադառնում, եւ ամբողջ գիշեր հանգիստ քնում եմ:*

☺ *Աղջիկը վերադառնում է դպրոցից: Նրա մոտ մի մեքենա է կանգնում:*

*Վարորդն ասում է.*

*- Եթե նստես, քեզ կոնֆետ կտամ:*

*- Ո'չ:*

*- Պաղպաղակ կգնեմ:*

*- Չե'մ նստի:*

*- Նոր տիկնիկ կառնեմ:*

*- Պա'պ, քեզ հարյուր անգամ ասել եմ՝ էս «Զապորոժեցով» դպրոց մի՛ արի:*

☺ *- Պատմեք՝ ինչպե՞ս խելագարվեց ձեր կինը:*

*- Մենք ճանապարհորդում էինք լեռներում, որտեղ հիանալի արձագանք էր: Իսկ կինս սովոր էր, որ վերջին խոսքը միշտ իրենն է...*

☺ *Միջին տարիքի մի զույգ զբոսնում է: Մեկ էլ կինն ամուսնուն ասում է.*

*- Տեսա՞ր, էն անցնող երիտասարդը նայեց ինձ ու ժպտաց:*

*- Ես որ քեզ առաջին անգամ տեսա, ծիծաղից մեռա:*

☺ *- Lսի'ր, կինդ ման է գալիս, - ասում է մի մարդ մյուսին:*

*- Ոչինչ, տաք է հագնված...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ

*Հայաստանի կառավարությունը, նախագահի լիազորությունների ավարտից հետո, Սերժ Սարգսյանին օրենքով սահմանված երաշխիքների տրամադրման մասին որոշում ընդունեց:*



Որոշմամբ նախատեսվում է Հայաստանի նախագահի աշխատակազմի ենթակայությա՝ «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում ամրացված՝ 6-րդ մասնաշենքի մեջ մտնող շենքը եւ շինությունները՝ սպասարկման տարածքով (1.5365 հա)՝ հետ վերցնել եւ սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Սերժ Սարգսյանին՝ որպես բնակարան:

Որոշմամբ Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի կառավարության աշխատակազմի ղեկավարին եւ Ազգային անվտանգության ծառայության տնօրենին հանձնարարվում է ապահովել օրենքով սահմանված մնացյալ երաշխիքների տրամադրումը Սերժ Սարգսյանին՝ նախագահի լիազորությունների ավարտից հետո՝ իր դիմումի հիման վրա:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի ապրիլի 9-ից:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՄԱՆ ԿԱՐԳՆ Է

*Հայաստանի Ազգային ժողովի խորհուրդը կքննարկի Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանի երդմնակալության արարողության կարգը: Հարցն ընդգրկված է ՀՀ ԱԺ խորհրդի նիստի օրակարգում:*

Ըստ որոշման նախագծի՝ Հանրապետության նախագահի պաշտոնի ստանձնմանը նվիրված 2018 թվականի ապրիլի 9-ի Ազգային ժողովի հատուկ նիստը նախատեսվում է գումարել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, ժամը 12:00-ին:

Ազգային ժողովի պատգամավորների գրանցման կարգը սահմանում եւ գրանցումը կազմակերպում է Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբը: Նիստին հրավիրվող անձանց ցանկը հաստատում է Ազգային ժողովի նախագահը: Նիստը նախագահողի բացման խոսքից հետո՝ դահլիճ են բերվում Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, նախագահական իշխանության խորհրդանշանը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մայր օրինակը եւ Վեհամոր Ավետարանը:

Ձեռքը դնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մայր օրինակին եւ Վեհամոր Ավետարանին՝ Սահմանադրությամբ սահմանված երդմամբ հանդես է գալիս նորընտիր Հանրապետության նախագահը: Ելույթով հանդես են գալիս Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ նորընտիր Հանրապետության նախագահը: Ելույթների ավարտից հետո՝ դահլիճից դուրս են բերվում Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, նախագահական իշխանության խորհրդանշանը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մայր օրինակը եւ Վեհամոր Ավետարանը, որից հետո նախագահողը նիստը հայտարարում է փակված:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

*Հայաստանի նախագահի հրամանագրերով, տարբեր բնագավառներում ներդրած ավանդի եւ արդյունավետ գործունեության համար, մի խումբ անձինք պարգեւատրվել են պետական բարձր պարգեւներով, շնորհվել է նաեւ պատվավոր կոչում:*

Մարտի 26-ին, Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած հանդիսավոր արարողությանը, Հայաստանի Հանրապետության նախագահը տարբեր բնագավառներում պարգեւի արժանացած անձանց հանձնել է պետական բարձր պարգեւները եւ շնորհակալություն հայտնել նրանց կատարած աշխատանքի ու նվիրումի համար, մաղթել՝ նորանոր հաջողություններ եւ անսպառ եռանդ՝ հետագա նպատակներն իրականացնելու ճանապարհին:

Պարգեւատրման հանդիսավոր արարողությունից հետո՝ Սերժ Սարգսյանը թեյի սեղանի շուրջ հանդիպում է ունեցել անցած տասը տարիներին նախագահի գործունեությունը՝ նրա մարզային եւ արտերկրյա այցելությունները, նախագահական նստավայրում եւ դրանից դուրս տեղի ունեցած միջոցառումներն ակտիվ լուսաբանած լրագրողների եւ լրատվական ծառայությունների ղեկավարների հետ, որոնց մի մասն այսօր արժանացել է պետական պարգեւների: Նախագահը լրագրողների հետ զրուցել է նրանց հետաքրքրող եւ մտահոգող հարցերի շուրջ, որոնք վերաբերել են ինչպես Հայաստանի ներքին խնդիրներին, այնպես էլ՝ արտաքին քաղաքականությանը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



*Մարտի 26-ին, Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի («ՋԱՀ») խորհրդի նախագահ Սոս Սահակյանին, խորհրդի անդամներ, գործարար Մնացական Գասպարյանին (Մոսկվա), գործարար Աղասի Սահակյանին (Սանկտ Պետերբուրգ), բարերար Քաջիկ Նուրիջանյանին (Երեւան), գործադիր տնօրեն Աշոտ Հակոբյանին, գործադիր տնօրենի իրավական եւ ֆինանսական հարցերով տեղակալ Սամվել Մկոյանին:*

Նախարարը պատվոգրեր հանձնեց Աղասի Սահակյանին, Մնացական Գասպարյանին եւ Աշոտ Հակոբյանին՝ Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների հայ համայնքների հասարակական կյանքի զարգացման եւ՝ հայ-վրացական համագործակցության սերտացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն ակտիվ մասնակցելու համար:

## ԱՎԵԼԻ ՔԱՆ 50 ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ» ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված ավելի քան 50 միջոցառում կանցկացվի: Այս մասին ասաց Երեւանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը:

Նրա խոսքով՝ միջոցառումների շրջանակում կհայտարարվեն նաեւ մի շարք մրցույթներ: «Երեւանի հիմնադրման 2800-ամյակի առիթով տեղի կունենան գիտաճանաչողական մի շարք միջոցառումներ: Դրանցից մեկը հայագիտությանը վերաբերող միջազգային գիտաժողովն է»,- ասաց Սուքիասյանը՝ հավելելով, որ հիմնական միջոցառումները տեղի կունենան սեպտեմբերի 29-ին եւ 30-ին՝ Էրեբունի արգելոց-թանգարանի ամրոցում, Հանրապետության հրապարակում:

## «ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ԱՇՈՒՂ» ՀԱՄԵՐԳ-ԵՐԵԿՈ՝ ԲԵՌԼԻՆՈՒՄ

*ԳԴՀ-ում, ՀՀ դեսպանության աջակցությամբ, Բեռլինի «Kulturbrauerei» մշակութային կենտրոնում, մարտի 24-ին, կայացավ «Սայաթ-Նովան՝ Կովկասի աշուղ» խորագրով համերգ-երեկո:*

Միջոցառման ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը: Դեսպանը նշեց, որ Սայաթ-Նովային, ով իրեն հավասարապես տանն էր զգում ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Վրաստանում եւ Իրանում, կարելի է իրավամբ բնութագրել՝ որպես աշխարհաքաղաքացի եւ ժողովուրդների փոխըմբռնման դեսպան:

Երեկոյի ընթացքում հանդես եկան դուդուկահար Գեւորգ Դաբաղյանը, քամանչահար Հակոբ Խալաթյանը, քանոնահարուհի Կարինե Հովհաննիսյանը, Բեռլինի պետական օպերային երգչուհի Նարինե Եղյանը, երգիչ Գուրգեն Դաբաղյանը եւ այլք: Սայաթ-Նովայի ստեղծագործությունները գերմաներենով ներկայացրեց գերմանացի հայտնի ասմունքող Մաթիաս Մյուլլեր-Լենդրոթը: Համերգին ներկա էին Գերմանիայի քաղաքական եւ մշակութային գործիչներ, Բունդեսթագի պատգամավորներ, լրագրողներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

### ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Մարտի 25-ին, Հայաստանի նախկին վարչապետ, պետական, քաղաքական գործիչ Անդրանիկ Մարգարյանի մահվան տարելիցի կապակցությամբ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, երկրի բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ, այցելեց Կոմիտասի անվան պանթեոն, հարգանքի տուրք մատուցեց Անդրանիկ Մարգարյանի հիշատակին:*

### ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

*Մարտի 28-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում, մասնակցեց՝ ակադեմիայի 2017 թվականի գիտական եւ գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներին նվիրված տարեկան ընդհանուր ժողովին:*

*ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց ակադեմիայի գիտական գործունեության կարեւորագույն եւ կիրառական արդյունքները, անդրադարձավ՝ հաշվետու տարում միջազգային համագործակցության ուղղությամբ ակադեմիայի կողմից իրականացված աշխատանքներին: Գիտությունների ազգային ակադեմիայի 2017թ. գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցեց ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, թղթակից անդամ Հրանտ Մաթեւոսյանը: Տարեկան ժողովում ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը ներկայացրել է «Քաղաքակրթությունների եւ ժամանակների խաչմերուկում. Հայաստանն ըստ նորահայտ հնագիտական տվյալների» գիտական զեկուցումը: Ընդհանուր ժողովում ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:*

### 200 ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ

*Հայաստանի առողջապահության նախարար Լեւոն Ալթունյանը եւ ՀՀ-ում Չինաստանի առեւտրատնտեսական հարցերով խորհրդական Ուանգ Շիյայն ստորագրել են «Չինաստանի կողմից Հայաստանին շտապօգնության մեքենաների անհատույց տրամադրման ծրագրի իրականացման մասին» տեխնիկական համաձայնագիր: Կողմերը հստակեցրել են շտապօգնության մեքենաների անհատույց տրամադրման ծրագրի ժամանակացույցը, ըստ որի՝ համաձայնագիրը ստորագրելուց հետո 110 օրվա ընթացքում Հայաստան կհասցվի շտապօգնության 200 մեքենան:*

### ԵՐԿՈՒ ՏԱՍՆՅԱԿ ՑՆՑՈՒՄ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՈՒՄ

*Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության ծառայությունը», անցած յոթ օրվա ընթացքում, տարածաշրջանում գրանցել է 20 երկրաշարժ, որոնցից 8-ը՝ Հայաստանի տարածքում, 3-ը՝ Արցախի: Հայաստանի «Սեյսմիկ ծառայությունը» ստորգետնյա ցնցումներ է փաստագրել նաեւ Վրաստանի տարածքում: Մասնավորապես, Գորի քաղաքի մատույցներում, Դվարելի եւ Դմանիսի քաղաքի մատույցներում: Երկրաշարժերի հետեւանքով զոհեր եւ ավերածություններ չկան:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԱՊՐԻԼ

*1.04.2018. Սուրբ Հարության տոն*



*7.04.2018. Ավետումն Սուրբ Աստվածածնի*

Ապրիլի 7-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին նշում է իր ամենակարեւոր տոներից մեկը՝ Սբ. Աստվածածնի ավետումը:

*7.04.2018. Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր*

*8.04.2018. Կրկնազատիկ (Նոր կիրակի)*

Կրկնազատիկ է կոչվում երեք պատճառներով:

Զատիկ նշանակում է ազատություն եւ այդ օրը կրկնակի ազատության օր է: Աստված մեզ ազատել է մեղքերից, սակայն մենք գտնվում ենք կրքերի ազդեցության ներքո: Իսկ երբ Աստված ամեն ինչ նոր է անում եւ՝ բոլոր կարիքներից մեզ ազատում, դա կոչվում է Կրկնազատիկ: Կրկնազատիկ է կոչվում մեր հարության պատճառով: Քրիստոս առաջին կիրակի օրը մեզ հարություն տվեց:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

### ԹԲԻԼԻՍԻԻՑ ԲԱԹՈՒՄԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԻ ՀԱՍՆԵԼ ԷԼԵԿՏՐԱՄՈԲԻԼՈՎ

***2018 թվականին Թբիլիսիից սեւծովյան Բաթումի հնարավոր կլինի առանց որեւէ խնդրի հասնել էլեկտրամոբիլով: Այդ մասին հայտարարել է E-Space ընկերության տնօրեն Սուլխան Գվալիան՝ TV Pirveli հեռուստաընկերության եթերում:***



E-Space-ն առաջին ընկերությունն է Վրաստանում, որն զբաղվում է երկրում էլեկտրամոբիլների տարածմամբ եւ լցակայանների համապատասխան ցանցի զարգացմամբ: Թբիլիսիից Բաթումի հեռավորությունն ավելի քան 370 կմ է:

- Թբիլիսի-Բաթումի ավտոճանապարհին այս տարի չորս լցակայան կտեղակայվի էլեկտրամոբիլների համար,- ասել է Գվալիան՝ ընդգծելով, որ դա բավարար կլինի էլեկտրամոբիլով սեւծովյան առողջարան հասնելու համար: Մինչեւ 2018 թվականի վերջը՝ էլեկտրամոբիլը կարելի կլինի լիցքավորել անվճար:

- Այնուհետեւ մենք կտեսնենք էլեկտրամոբիլների թվաքանակի աճի դինամիկան եւ որոշում կընդունենք,- հավելեց ընկերության տնօրենը:

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

### ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ԱՎՏՈԽՃԱՆԱՊԱՐՀԸ ՓԱԿ Է

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ճանապարհային դեպարտամենտը՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը՝ քարաթափման վտանգի պատճառով, փակ է տրանսպորտային բոլոր միջոցների համար:

## ՍՊՈՐՏ

### ԾԱՆՐԱՄԱՐՏ. ՇՈԹԱ ՄԻՇՎԵԼԻՁԵՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ



Ռումինիայի մայրաքաղաքում եզրագիծը հատեց Եվրոպայի ծանրամարտի առաջնությունը: Նշենք, որ այն ծրագրվում էր անցկացնել Տիրանայում (Ալբանիա), թեպետ, դոպինգի հետ կապված հերթական բացահայտումների պատճառով, ծանրամարտի ֆեդերացիայի որոշմամբ, մրցաշարը հետաձգվեց, ապա այն անցկացվեց Բուխարեստում: Մրցաշարին մասնակցելու իրավունք չտրվեց Հայաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Մոլդովայի, Ուկրաինայի, Բելառուսի եւ Ադրբեջանի հավաքականներին:

Մրցաշարի 62 կգ քաշային կարգով, երկմարտում, ընդհանուրը 299 կգ-ով, մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեց Վրաստանի հավաքականի ներկայացուցիչ Շոթա Միշվելիձեն: Նա վեց եւ 13 կգ-ով գերազանցեց բուլղարացի Ստիլյան Գրոզդեւին ու ռումինացի Իոնու Իլյեին:

### ՖՈՒՏԲՈԼ. ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ՝ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍ

Անցած շաբաթ, աշխարհի տարբեր երկրների ֆուտբոլի ազգային հավաքականները, աշխարհի առաջնության նախապատրաստման շրջանակներում, անցկացրին ընկերական հանդիպումներ: Նման հանդիպումներ անցկացրին նաեւ Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները:

Թբիլիսիում Վրաստանի ազգային ընտրանին՝ 4:0 եւ 2:0 հաշվով, համապատասխանաբար, առավելության հասավ Լիտվայի եւ Էստոնիայի հավաքականների նկատմամբ: Հայաստանի հավաքականը, Երեւանում, Էստոնիայի հետ հանդիպումն ավարտեց զրոյական ոչ-ոքիով, իսկ Լիտվայի հավաքականին զիջեց 0:1 հաշվով:

### ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՍՏԱՑԱՎ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ» ՄՐՑԱՆԱԿԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ Լոնդոնի «Արսենալ»-ի ֆուտբոլիստ Հենրիխ Մխիթարյանը ստացավ Հայաստանի 2017 թվականի լավագույն ֆուտբոլիստի մրցանակը: «Շատ մեծ հաճույքով եմ ստանում այդ պարգեւը: Կփորձեմ հաջորդ տարիների ընթացքում նույնպես լինել առաջինը, իհարկե, հարգելով իմ թիմակիցներին»,- ասաց Հենրիխ Մխիթարյանը՝ մրցանակը ստանալու արարողությանը:



Հավաքելով 190 միավոր՝ Հայաստանի 2017թ. լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Հայաստանի ազգային հավաքականի ավագ, այդ ժամանակ «Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը, որը 8-րդ անգամ իր կարիերայի ընթացքում եւ 7-րդ անգամ անընդմեջ, դարձավ Հայաստանի տարվա լավագույն ֆուտբոլիստ: 2017 թվականի ընթացքում Մխիթարյանը նվաճել է Եվրոպա Լիգայի, Անգլիայի լիգայի գավաթները, ընդգրկվել է Եվրոպա Լիգայի խորհրդանշական հավաքականում: Մխիթարյանն այսօր ամենաճանաչված հայերից մեկն է աշխարհում: Նշենք, որ Հենրիխ Մխիթարյանը, 2017 թվականին Հայաստանի լավագույն 10-ը մարզիկների ցուցակում ընդգրկվելու համար որպես նվեր ստացած ավտոմեքենան փոխանցեց վիրավոր եւ հաշմանդամ զինծառայողների վերականգնման կենտրոնին:

35 միավորով երկրորդ տեղը զբաղեցրել է Հայաստանի ազգային հավաքականի եւ մակեդոնական «Վարդարի» հարձակվող Տիգրան Բարսեղյանը, ում անունը 10-ը անգամ նշվել է երկրորդ, 5 անգամ՝ երրորդ տեղում:

25 միավորով երրորդ հորիզոնականը զբաղեցրել է Հայաստանի ազգային հավաքականի եւ ռուսական «Ուրալ» թիմի պաշտպան Վարազդատ Հարոյանը, ում անունը 7 անգամ նշվել է երկրորդ, 4 անգամ՝ երրորդ հորիզոնականում:

### ՇԱԽՄԱՏ. ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ ՀԱՂԹՈՂ ԴԱՐՁԱՎ ՖԱԲԻԱՆՈ ԿԱՐՈՒԱՆԸ, ԻՍԿ ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԸ...

Բեռլինում եզրագիծը հատեց աշխարհի չեմպիոնի հավակնորդների մրցաշարը, որին մասնակցում էին ութ գրոսմայստերներ: Մասնակիցների թվում էր նաեւ հայաստանցի Լեւոն Արոնյանը: Հայ գրոսմայստերը մրցաշարը բավական խոստումնալից սկսեց, թեպետ հետո՝ նրա խաղը ոչինչով չուրախացրեց: Արդյունքում, Լեւոն Արոնյանը մեկ հաղթանակով, յոթ ոչ-ոքիով եւ վեց պարտությամբ, 4,5 միավորով եզրափակեց մրցաշարային աղյուսակը:

Նշենք, որ 2017 թվականի աշխարհի գավաթակիր Հայաստանի հավաքականի անդամ Լեւոն Արոնյանն իր մարզական կարիերայում մասնակցած եւ ոչ մի մրցաշարում նման անկում չի ունեցել:

Իսկ հավակնորդների մրցաշարի հաղթողը դարձավ ամերիկացի Ֆաբիանո Կարուանը: Նա իր ակտիվում գրանցեց 9 միավոր: Ֆաբիանո Կարուանը նվաճեց աշխարհի գործող չեմպիոն նորվեգացի Մագնուս Կարլսենի հետ 2018 թվականի աշխարհի ուժեղագույն կոչումը վիճարկելու իրավունք: Մրցաշարի երկրորդ եւ երրորդ տեղերը, 8-ական միավորով, զբաղեցրին ադրբեջանցի Շախրիյար Մամեդյարովը եւ ռուսաստանցի Սերգեյ Կարյակինը:

## ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 3.Փականք բացել-փակելու հարմարանք: 4.Ագրեգատների եւ սարքերի ամբողջություն, որը վերափոխում է էներգիան եւ/կամ շարժման ձեւը: 8.XIII դարի հայ պատմիչ, վարդապետ՝ Կիրակոս ...: 11.Ձեռքի հարված դեմքին: 14.Պինդ, ամուր: 15.Ասորեստանի թագուհի: 16.Ձմեռային մարզագույք: 17.Մարտիկ, զինվոր: 21.Վայրի կենդանի: 22.Գետ եւ քաղաք Վրաստանում: 23.Կաթնամթերք: 26.Օպտիկական սարք, որը խոշորացնում է հեռվում գտնվող առարկաների պատկերը: 27.Լեռ Թբիլիսիում: 28.Նեղ ճանապարհ, կածան:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.XIX դարի ուկրաինացի բանաստեղծ ... Շեւչենկո: 2.Ոտքի հարված: 5.Բակի, շենքի մուտքի մեծ դուռ: 6.Մերձբալթյան պետություն: 7.Անձրեւից հետո բացվող յոթնագույն կամար: 9.Կառույց՝ մարզական նպատակների համար: 10.Այգեգործ, այգեպան: 12.Գին, արժեք: 13.Լրակազմ, կոմպլեկտ: 18.Սար Վրաստանի Լիխիի լեռնաշղթայում: 19.Ֆրանսիացի դերասանուհի, երգչուհի եւ ֆոտոմոդել Վանեսա ...: 20.Գետ Կոդորիի բարձրավանդակում: 24.Քաղաք Վրաստանի Կախեթի երկրամասում: 25.Հայ Առաքելական եկեղեցու 10-րդ կաթողիկոսը՝ ... Ա Պարթեւ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Շագալ: 4.Խուդյակով: 9.Ավելուկ: 12.Ուրմիա: 13.Իր: 14.Վաղ: 15.Լոդր: 17.Արի: 18.Ետադաս: 19.Ցայգ: 20.Դա: 21.Ցար: 22.Ռիյկա: 24.Խնուս: 27.Նու: 28.Սուեզ: 30.Արամ: 31.Էմու: 34.Ձի: 35.Ամենա: 37.Լվով: 39.Սրինգ: 40.Մնաս: 41.Աքրա: 42.Կի: 43.Սի: 44.Կա: 45.Արա: 47.Դվին: 48.Իմ: 50.Լող: 54.Նորա: 55.Վայրագ: 57.Իսկ: 58.Արես: 59.Զա: 60.Նիկա: 61.Պատ: 62.Զագորա:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 2.Ասեղի: 3.Ագուլեցի: 4.Խլուրդ: 5.Դամասկոս: 6.Ախալցիխե: 7.Վարդգես: 8.Թավադ: 10.Վարար: 11.Կոտայք: 16.դ'Արկ: 22.Ռումինիա: 23.Արմեն: 25.Նգովք: 26.Բարսեղ: 27.Նազիկ: 29.Ուլ: 31.Էմմի: 32.Ունակ: 33.Ձվարի: 36.Ասադ: 37.Լավինյա: 38.Որ: 43.Սալոր: 46.Աղասի: 49.Մոկաց: 51.Որեն: 52.Ղազար: 53.Քիրս: 54.Նավթ: 55.Վռազ: 56.Գատա: 61.Պո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445